



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Преображен
Бог в землю под



(93)

531.3

12-15

Ա. Խ. Հ. ՀՈՂՔՈՎ ԿՈՄԻՏ

ԴՐԱԿԱՆՆԵՐՆԵՐՆ ՀԵՂԲՈՒՅ ԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

14 AUG 2000

Ա. Պ. Պ. Պ. Պ. Պ.

ՏՐԱԿՏՈՐ ՅԵՎ. ՆԻԿ ԱՇԽԱՏՈՒՔԸ

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎԵՎ. Ա. 1931

16171

18.06.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ

12678 - 57

Հրատ.

№ 1497

Դրամական թուղթ 6146 (բ) Պատվեր 85, Տիրաժ 3000.

Պետհրատի տպարան Յերևանում

ՅՐԱԿՑՈՒՅ ՅԵՎ. ՆՐԱ. ԱՇԽԱՏՈՒՅՔԸ

Մի տաս տարի առաջ մեր զյուղացուն անձանոր տրակտորը այժմ դառել է նրա ամենուրյա պահանջի առարկան:

Տրակտորը արագաւագ է. նա այնքան ուժ ունի, վոր կարող է փախարինել 20—30 ու ել ավելի լծկան անառութեարի, տրակտորը սրանց նման նոզնել չգիտի:

Տրակտորի դեկավարելը առանձին ֆիզիկական ուժ չի պահանջում, — միայն պահանջվում է հմտություն նրա նետ վարվելու՝ խնամքով վերաբերվելու տեսակետից. նրա իեզուն հասկանալ ե հարկավոր:

Տրակտորի ոգտագործումը ժամանեած է, յերբ նա աշխատում է խուսոր և ողակ սոր ներում. մասն անհատական տնտեսություններում ահազին ժամանակ ե վաճարվում հանախակի պտույտներ անելու ու մի հողակտորից մի այլ հողակտոր անցնելու ընթացքում:


Փորձը Հայաստանում ցույց է տալիս, վոր, յերբ հողակտորը խուսոր է, տրակտորը որեկան վարում է 2—3 հեկտար, իսկ մասն հողակտորներում՝ միշին հաշվով 1 հեկտար. այս վերջին դեպքում վարի ինքնարժեքը կրկնակի բարձր է լինում:

Տրակտորի այս մի ժամի երական հատկություններն ու առավելություններն իսկ բավական եին, վոր նա դառ-

նար զյուղատնեսուրյան վերակառուցման բնրացքում
հիմնական պահանջ:

Ե. Միուրյան մեջ զյուղատնեսուրյունը արդեն ան-
ցել է իր վերակառուցման շրջանը, այժմ շահմեր են բա-
փում վրչ միայն զյուղատնեսուրյունը նաև իր յետա-
մեաց դրույթից, լայն տեղ տայ մեթեայացման, տնե-
սուրյան ռացիոնալ ձեւեր կիրառելուն, այլ յեվ այն
դեմք սոցիալ սահմանական տնեսուրյունները, տեղի
տալով կոլտնեսուրյուններին, մասն կոլտնեսուրյունները
միանում են, ել ավելի ուժեղ կոլտնեսուրյուններ առաջ
բերում:

Դյուղատնեսուրյան վերակառուցման գործում մեծ
է տակտորի դեր:




ՅՐԱԿԱԾՈՐՆԵՐԻ ՑԵՍԱԿՆԵՐԸ ՑԵՎ ՆԲԸՆՑ ԿԱՏԱՔԵԼԻՑ ԸՆԽԱՑՈՒՑՆԵՐԸ


Գյուղատնտեսական տարբեր աշխատանքնե-
րի համար պատրաստվում են տարբեր տեսակի
և ուժի արակտորներ: Ներկայումս նրանք բա-
ժանվում են յերկու խմբի:

1. Անիվավոր արակտորներ—ինչպիսիք են
մեզ մոտ «Թորդոն», «Ինտերնացիոնալ», «Ալ-
լիս-Զալմերս», «Կեյս» և «Թարմոլ» արակտոր-
ները:

2. Թթվուրակիոր արակտորներ՝ վորպի-
սիք են «Կատերպիլար», «Կիետրակ» և ուրիշները:




Անիվավոր տրակտորներից արժե առանձնագույնը հիշատակել—«Ֆարմոլ» և «Դու-ոլ» տրակտորները, վորոնք հարմարեցվում են հոտ-



կապես միջարքային կուլտուրաներ մշակելու համար։ Բոլորիս հայտնի յե, վոր բամբակի քաղանուր—թե ձեռքով և թե ձիով դժվարին ե և յերկար ժամանակ ե խլում, ել չենք ասում, վոր բամբակի ցանքուր մի շարքային շարքացանով պահանջում ե հսկայական չափերով մարդկային և կենդանի ուժ։ Իսկ «Ֆարմոլ» տրակտորը միանգամից աշխատացնելով չորս-շարքային շարքացան որեկան կատարում ե այնքան աշխատանք, վորքան կարող են կատարել 20 մարդ 10 ձի 10 մի շարքային շարքացաններով։




Հայաստանում ամենից շատ տարածված են անիվավոր տրակտորներ։ Թրթուրավոր, կամ միջնարքային կուլտիվացիայի համար պատրաստված տրակտորները դեռ չեն մուտք գտել։ Հե-




տագա տարիների համար պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել ներմուծելու համար թրթուրավոր և «Ֆարմոլ» տիպի տրակտորներ, վորոնք ունեն մեծ առավելություններ՝ մասնակորապես ջրովի բամբակացան շրջաններում:

Մեզ մոտ յեղած անիվավոր տրակտորներից ամենից շատ տարածված են «Ֆորդոն», ապա «Ինտերնացիոնալ» և վերջերս «Վալես» սիստեմի տրակտորներ:



Ամենից փոքրուժանոց տրակտորները «Փորդոններն» են: Մեր հողային պայմաններում

«Ֆորդոն» սիստեմի տրակտորները իրենց այնպես չեն արդարացնում, ինչպես մյուս սիստեմի տրակտորները – այդ պեսք և լինի պատճառը, վոր այսուհետ ձեռնպահ պետք ե մնալ «Փորդոններ» ներմուծելուց:



Յեղած «Ինտերնացիոնալ» տրակտորներից փոքրերը 10—20 ձիու ուժանոց են, իսկ մեծերը 15—30 ձիու ուժանոց: Մեզ մոտ փոքրերը ավելի շատ են տարածված:

Տրակտորների ոգտագործման բնագավառը քանի գնում լայնանում է, այժմ տրակտորներ պատրաստվում են վոչ թե միայն գյուղատնտեսության, այլ և արդյունաբերության և ճանապարհների շինարարության բնագավառներում ոգտագործելու համար: Այդ և պատճառը, վոր

վերջերս արակատըների կառուցվածքը այնպես
էն կատարելագործում, վորպեսզի հնարավոր լի-
նի հարմարեցնել զանազան բնութիւն կրող աշխա-
տանքների: Այդ տեսակետից մի շարք անիվավոր
տրակտորներ այնպես են շինված, վոր ամեն
անգամ, յերբ պահանջ զգացվի կարողանան ա-
նիվարը փոխարինել թրթուրավոր հարմարու-
թյուններ վ:

Բոլոր գոյություն՝ ունեցող անիվավոր
տրակտորների մեծ մասը միջին ուժանոց են,
այսինքը 10—20-ից մինչև 20—35 ձիու ուժ:
Իսկ թրթուրավոր տրակտորները մեծ մասամբ
30, 40, 60 ու ել ավելի ուժանոց են:

Հիմա ծանոթանանք տրակատըներով կատա-
րելիք տարբեր աշխատանքների հետ:



ՏԵԿՆՈՐԾ ՎԵՐՈՒՄ Ե

Գյուղատնտեսական աշխատանքներից ամե-
նածանրը վարն ե: Տրակտորը կարող ե վարել

յերկու, յերեք, չորս, վեց, ութ ու ել ավելի
խոփանի գութաններով, նայած թե տրակտորը
ինչ ուժանոց ե:

Հայաստանում աշխատող տրակտորները
10—20, 15—30, 20—30, 18—32 ուժանոց են:
Առաջին թվերը ցուց են տալիս իսկական քա-
շողական ուժը, վորով տրակտորը իր լեռներց
գութան, կամ այլ մեքենա տանում ե, իսկ յերե-
րորդ մեծ թվերը ցուց են տալիս, թե տրակ-
տորը քանի ուժ կարող ե զարգացնել ծնկածե
առանցքի, կամ փոկագնաց անիվի (շկիվի) վրա:
Որինակ, յեթե 10—20 ուժանոց տրակտորը վա-
րում ե, նա գործածում ե 10 ձիու ուժ այդ
աշխատանքի համար, սակայն յերբ այդ նույն
տրակտորը կանգնած՝ աշխատեցնում ե կալսող
մեքենան, նա զարգացնում ե և ուղարկործում
ե մինչև 20 ձիու ուժ:

Ուժի պակասումը տրակտորի շարժման
ժամանակ բացատրվում ե նրանով, վոր զար-
գացրած ուժի մի մասը ծախսվում է տրակտորը
փոխադրելու համար, մյուս մասն ել ծախսվում
է տրակտորի գանազան փոխանցման մեխանիզմ-
ներում առաջացած շփումները հաղթահարելու
համար:

Բազմախոփանի գութաններով (5—2) աշխա-
տող տրակտորները ավելի մեծ են լինում, ծանր

և մեծ մասամբ թրթուրավոր տեսակից։ Մեզ
մոտ յեղած տրակտորները աշխատում են յեր-
կու կամ յերեք խոփանի գութաններով։ Մեր հո-
ղերը համեմատաբար սինդ են, նրանց դիմա-
դրությունը ավելի մեծ է քան Միության ուրիշ
հանրապետություններում։ Այդ ե պատճառը,
վոր յեթե «Ֆորդզոնը» մեզ մոտ յերկու խոփա-
նի գութանով որեկան 2 հեկտար ե վարում,
Ուկրաինայում նա վարում ե 3 հեկտար, Յեր-
բեմը պատահում են այնպիսի չոր - կավային տե-
ղեր, վորտեղ «Ֆորդզոնները» հազիվ կարողա-
նում են աշխատել մեկ խոփանի գութանով։

Չիման կամ խոպան հողերում 6-ից մինչև
8 լուծ յեզ պետք ե լծել, վորպեսզի սովորական
գութանով որեկան կես հեկտար վարվի։ Այդ կես
հեկտարի համար բացի արդքան լծկաններից
պետք ե պարապեն ևս 3-4 մարդ։ Դրա փոխա-
րեն նույն չիման հողերը վարելու համար հար-
կավոր կլինի մեկ 15—30 ուժանոց տրակտոր և
մեկ հմուտ արակտորիստ, վորը փորձված լինե-
լու դեպքում որեկան կվարի 2 և ավելի հեկտար
հող, կատարելով արդպիսով չորս անգամ ավելի
աշխատանք, քան մաճկալը իր աշխատակիցնե-
րով և լծկան անասուններով։

Շատերը կարծում են, իրը թե տրակտորը
իր ծանրությամբ տրորում և պնդացնում ե

հողը, հետեապես և նպատակահարմար չի նրան
վաղ գարնան խոնավ հողերում աշխատացնել։
Այդ սխալ ե, մասնավորապես թրթուրավոր
տրակտորների նկատմամբ։ Յեթե համեմատելիս
լինենք ձիու սմբակի կամ մարդու վոտքի տեղը
խոնավ հողում թրթուրավոր տրակտորի շղթայի
տեղի հետ, մենք կտեսնենք հետեւյալ պատկերը.
մարդու վոտնատեղի տարածությունը կազմում
է շուրջ 130 քառ. սմ., ընդունելով, վոր նրա
քաշը 64 կգ. (4 փութ) ե, ամեն մի քառ. սմ.
վրա ընկնում ե ավելի քան 0,4 կգ., այնինչ
թրթուրավոր տրակտորը, թեև ունի 3.000 կգ.-ից
ավելի քաղ, սակայն այն տարածությունը, վորի
վրա նա հենվում ե առաջ շարժվելիս, այսքան
լախ ե, վոր մեկ քառ. սմ. վրա ընկնում ե 0,3
կգ. ծանրություն։ Այդպիսով տեսնում ենք, վոր
թրթուրավոր տրակտորով ավելի քիչ կարելի յե
պնդացնել հողը, քան մարդու վոտքով, կամ ձիու
սմբակով։ Յեկ այդ ե պատճառը, վոր վաղ գար-
նան թաց տեղերում, ուր նույնիսկ ձիերը կա-
րող են թաղվել, թրթուրավոր տրակտորով հսա-
րավոր ե աշխատել։

ՏՐԵԿԱՐՔԻ ԱՐՏԵԳՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրակտորի արտադրողականությունը կա-
խում ունի մի շարք որյեկտիվ և սուբյեկտիվ

շանգամանքներից։ Թվենք դրանցից մի քանիսը։

1. Հողամասի մեծությունը
2. Հողի դիմագրությունը (պինդ լինելը):
3. Տրակտորի ուժից և արագությունից։
4. Տրակտորիստի հմուտ լինելուց։
5. Գութանների խոփերի թվից և մի շարք այլ պայմաններից, ինչպիսիք են նավթամթերքի վորակ, լուղի վորակը, արակտորի տեխնիկական դրությունը և այլն։

Մեզ մոտ մինչև որս տրակտորների արտադրողականությունը չի հասել այն նորմային, վորը լնդունված եւ տարբեր սիստեմի և ուժի տրակտորների համար։

Խ. Միության մի շարք մեծ խորհունտեսություններում և կոլխոզներում տրակտորները աշխատում են որեկան լերեր հերթ (20 ժամ), վարելով փոքր «ինտերնացիոնալ»-ով 6 հեկտար իսկ մեծ «ինտերնացիոնալ»-ով 9 հեկտար։

Հողամասի մեծությունը մեծ դեր է խաղում տրակտորի արտադրողականության բարձրացման գործում։ Ցըված հողերը ստիպում են տրակտորն ավելորդ ճանապարհորդություններ կատարել, իզուր ժամանակ կորցնել և ավելորդ նավթամթերք ծախսել։ Վերջին հաշվով ցըված ու իրարուց հեռու ընկած հողամասերում աշ-

խատելիս, տրակտորի աշխատանքը կը կնակի թանգանում եւ և այդպիսով նա իրեն չի արդարացնում։

Հյուսիսային Կովկասում գտնվող «Գիգանտ» խորհրդային տնտեսությունում տրակտորները գարգացնում են ամենաբարձր արտադրողականություն, վորովհետեւ այնտեղ համատարած հողամասերը տասնյակ հազար հեկտարների յեն հասնում։

Մեզ մոտ մինչև այժմ լեզած հետազոտությունները ցույց են տալիս, վոր խորհ. տնտեսություններում, ուր հողամասերը մեծ են, տրակտորների արտադրողականությունը ավելի բարձր ե, քան բամբակացան շըջանների մի շարք տրակտորային տնտեսություններում։ Նույն հետազոտությունները ցույց են տալիս, վոր կոլխոզների հողամասերում—համեմատած անհատական տնտեսությունների հողամասերի հետ տրակտորների արտադրողականությունը դարձյալ բարձրը ե։

Այսպես վոր տրակտորները չեն սիրում կարճ տարածություններ, թումբեր, միջնակներ, արհեստական սահմաններ, նրանք սիրում են, վոր հողերը լինեն լայն, ընդառակ, վորպեսզի անընդհատ վազեն և հողը շուր տան։

Տրակտորների արտադրողականությունը,

ինչպես ասացինք, կախում ունի նաև հողի դիմադրությունից։ Մինչև անգամ միենույն ուժանոց տրակտորները տարբեր հողերում, տարբեր արտադրողականություն են զարգացնում։ Հայաստանի հողային պայմանները շատ խայտարղեա են. կան հողամասեր, վորտեղ «Ֆորդոնը» վարում ե յերկու խոփանի գութանով, բայց կան և տեղեր, վորտեղ յերկու խոփանի գութանով աշխատելը անհնարին ե դառնում։

Արտադրողականության ցուցանիշներից մեկըն ել տրակտորի ուժն ե։ Այն կարծիքը, վորը տարած ված ե անգիտակ շրջաններում, իբր բոլոր տրակտորները միենույն արտադրողականությունը ունեն—սխալ ե։ Ավելի մեծ ուժանոց տրակտորը աշխատում ե բազմախոփանի գութանով, իսկ փոքր ուժանոց տրակտորը աշխատում մեկ, կամ յերկու խոփանի գութանով։ Պարզ ե, վոր առաջին գեպըում արտադրողականությունը ավելի բարձր կլինի, քան յերկորդ գեպըում։ Քանի վոր արտադրողականությունը կախված ե նաև կցված գութանի խոփերի քանակից, ընդունված ե ընդհանուր առմամբ տրակտորի քաշողական յուրաքանչյուր հինգ ձիութին հաշվել մեկ խոփ։ Որինակ, յեթե տրակտորի քաշողական ուժը հավասար ե 10 ձիու

ութի, վարի նորմալ պարմաններում նըան հարկավոր ե կցել յերկու խոփանի գութան։

«Ֆորդոն» կամ «Ինտերնացիոնալ» տրակտորները աշխատում են յերկու խոփանի, իսկ մեծ «Ինտերնացիոնալը» և այլ սիստեմի նույնաչափ կամ ավելի ուժեղ տրակտորները կարող են աշխատել յերեք և ավելի խոփանի գութաններով։ Պետք ե նկատել, վոր մեր պայմաններում հաճախ մեծ «Ինտերնացիոնալը» աշխատում ե նույնպես յերկու խոփանի գութանով։

Յերկու խոփանի գութանները լինում են 12 կամ 14 գյույմ, այսինքը 30 կամ 35 սմ. առ բացող խոփերով։ Այնպես վոր յեթե մենք հաշվելիս լինենք փոքր «Ինտերնացիոնալ» (10—20) տրակտորի արտադրողականությունը, ընդունելով, վոր նա կաշխատի յերկու 35 սանտիմետրանոց խոփանի գութանով, կտեսնենք, վոր ընդարձակ հողամասում նա 10 ժամ անընդհատ աշխատելու գեպըում կվարի մինչև 3—3,5 հեկտար։ Ստկայն մեզ մոտ փաստոքեն մեկ աշխատանքի որվա ընթացքում փոքր «Ինտերնացիոնալը» 3,5 հեկտարի փոխարեն հազիկ վարում ե 2—2,5 հեկտար, այսինքն մեկ հեկտար ավելի պակաս, քան հնարավար ե վագեր։

«Ֆորդոն» արտադրողը մերը թեև գործարանի կողմից նահանակած ե վերպես 10—20 ու.

ժամոց, սակայն “փաստորեն նա զարգացնելով ավելի պակաս ուժ, հազիվ կարողանում ե աշխատել մեր պայմաններում յերկու 30 սանտիմետրանոց խոփանի գութանով: 10 ժամվա ընթացքում նա կարող ե վարել 2—2,4 հեկտար, այսինչն մեղ մոտ փաստորեն վարում ե 1—1,5 հեկտար, վորը, ինչպես տեսնում ենք, դարձյալ պակաս ե նրա հնարավոր արտադրողականությունից:

ՆԱԼԹԱՐԹԵՐՔԻ ԾԱԽՍԸ ԵԽԸ ՄԵԿ ՀԵԿՏԵՐ ՎԵՐԻ ԻՆՔՆԱՐԹԵՔԸ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր բոլոր այն տրակտորային տնտեսություններում, վորտեղ աշխատանքը լավ կազմակերպվուծ չե, ցածը արտադրողականության հետ միասին նավթամթերքի ծախսը ամեն մի հեկտարի համար ավելի շատ ե լինում, քան ավելի կազմակերպված տրակտորային տնտեսություններում:

Մեծ կոլխոզների և խորհանտեսությունների աշխատանքը ցույց ե տալիս, վոր տրակտորագործումը ուացիոնալ կերպով կազմակերպելու դեպքում, նավթամթերքի քանակը ամեն մի հեկտարի համար նվազագույն չափերի յե հասնում: Սպիտակ նավթի քանակը ամեն մի հեկտարի համար մինչև այժմ տատանվել 35 կգ. ից

մինչև 56—60 կգ., իսկ յուղը կազմել ե ծախսած նավթամթերքի 15—20 տոկոսը:

Թե վորքան նշանակություն ունի տրակտորագործման ուացիոնալ կազմակերպումը՝ նավթամթերքը տնտեսորեն ծախսելու համար՝ պարզ կերպով ցույց ե տալիս 1930 թվի գարնանացանի ընթացքում տրակտորային աշխատանքների հետազոտությունը: Այդպես, բամբակացան շրջանում վաղարշապատի տրակտորային ջոկատի «Փորդգոնները» ծախսել են ամեն մի հեկտարին միջին հաշվով 34 կգ. նավթ, Դամարլուին 36 կգ., Հրազդանին 38 կգ.: Իսկ «Բնատերնացիոնալները» ծախսել են նույն կազմով 32 կգ., 33 կգ., 35 կգ.: Լենինականի խորհանտեսության ամեն մի «Խնաերնացիոնալ» ծախսել ե 30 կգ., Զողին 35 կգ., իսկ մերենատրակտորային կայանում 32 կգ. կամ յեթե վերցնենք ըստ ուժաժամկետ, կտեսնենք, վոր միջին հաշվով տրակտորի ամեն մեկ ուժին մի ժամվա ընթացքում ծախսվում ե 600—700 գրամ սպիտակ նավթ, այսինչ պետք ե ծախսվի 350—475 գրամ: Այդ ցույց ե տալիս, վոր մենք բոլորովին աշքաթող ենք արել նավթամթերքը խնայողությամբ ծախսելու կարեռը խնդիրը: Յեթե հաշվելիս լինենք թե ինչքան նավթամթերք կխնայենք մի տարգա ընթացքում, կտեսնենք, վոր ներկայումս

աշխատող 300 տրակտորով (վերածելով 10 ձիու ուժի) մի տարվա ընթացքում միայն սպիտակ նավթից կունենանք խնայողություն շուրջ 900 տոն, կամ մոտ 54.000 ռուբլի: Այդ Խ. Հայաստանի համար, իսկ յեթե վերցնենք Խ. Միությունը, վորտեղ 80.000-ից ավելի տրակտորներ են աշխատում, կտեսնենք, վոր նավթամթերքի խնայողությունից պետությունը կտնտեսի տասնյակ միլիոններ:

Այստեղից պարզ յերևում ե, վոր բոլոր տրակտորագոտագործող անտեսությունները պետք ե հատուկ ուշագրություն դարձնեն նավթամթերքը խնայողաբար ծախսելու վրա և այդ առթիվ կազմակերպեն զանազան մրցանակաբաշխություններ, սոցմրցումներ, արտադրական խորհրդակցություններ — տրակտորիստների և բրիգադապետների միջև:

1929 թվում տրակտորների կատարած աշխատանքների հետազոտությունը ցույց ե տալիս, վոր մեկ հեկտար վարի ինքնարժեքը բամբակմիության վրա նստել ե մինչև 29 ռուբլի, տրակտորները ունեցել են ամբողջ տարվա ընթացքում շուրջ 350—400-ական աշխատանքի ժամ, կամ վերածելով վարի-ամեն մի տրակտորի արտադրողականությունն յեղել ե 70—80 հեկտար: 1930 թվի գարնանացան կամպանի-

յաի ընթացքում տրակտորների աշխատանքների հետազոտությունից պարզվում ե, վոր միջին հաշվով ամեն մի տրակտորը այդ կարճ ժամանակա ընթացքում վարել ե 75—80 հեկտար, ընդ վորում «Խնտերնացիոնալ» ների արտադրողականությունը հասել ե մինչև 100—110 հեկտարի, իսկ «Փորդգոնները»—50—60 հեկտարի: Այստեղից պարզ ե, վոր տրակտորի արտադրողականությունը ամբողջ տարվա ընթացքում միջին հաշվով կհասնի 200 և ավելի հեկտարի:

Համեմատենք տրակտորի վարը յեզան վարի հետ: Տրակտորի վարի ինքնարժեքը վորոշելիս պետք ե նկատի առնել հետեւալ ծախսերը:

- 1) Նավթամթերք
- 2) Ամորտիզացիա (մաշվածություն)
- 3) Նորոգում
- 4) Հիմնական ներդրումի տոկոսներ
- 5) Տրակտորիստի վարձ
- 6) Ծածկոց տրակտորի համար և այլ վերադիր ծախքեր:

Հաշվենք այդ ծախքերը մեկ առ մեկ այնպես, ինչպես այդ պետք ե դրված լինի ռացիոնալ կերպով կազմակերպված տրակտորային տնտեսություններում:

Մեկ հեկտար վարի համար կպահանջվի:

- 1) Սպիտակ նավթ — 25 կդ. 7 կ. 1 ռ. 25 կ.
 2) Յուղ (ավտոլ, վիսկոզին,
 տավոտ) 2 կդ. 50 կ. 1. ռ.
 3) Բենզին 0,4 կդ 25 կ. 10 կ.
 4) Ամորտիֆացիա 2 ռ.
 5) Նորոգում (հաշված պա-
 հետալին մասեր) 2 ռ.
 6) Տրակտորիստի վարձ 2 ռ.
 7) Ծածկոց և այլ վերա-
 դիր ծախքեր 2 ռ.

11 ռ. 85 կ.

Կլոր 12 ռ.

Խոշոր խորհրդային տնտեսություններում,
 ինչպիսին ե «Գիգանտը» տրակտորի վարի ինք-
 նարժեքը կազմում է 9 ռուբլուց վոչ ավելի:
 Այս գարնան մեր հետազոտությունները ցույց
 տվին, վոր մեկ հեկտար վարը միջին հաշվով
 նատում է 15-16 ռ.:

- Եեղներով վարելու դեպքում կպահանջվի.
- 1) 10 յեզ — որեկան 1 ռ. 50 կ.— 15 ռ.
 2) Մեկ մաճկալ — 2 ռ.
 3) 3 հոտաղ — 2 ռ. 50 կ.

Բնդամենը 19 ռ. 50 կ.

Որեկան 5 լուծ յեղներով կվարվի կես հեկ.

տար հող: Ուրեմն յեղներով վարելու դեպքում
 մեկ հեկտար վարի արժեքը կկազմի 39 ռուբլի:

Այդպիսով, մենք տեսնում ենք, վոր տրակ-
 տորի վարը ավելի քան յերկու անգամ եժան և
 նստում յեղներով վարելուց:



ՑՐԵԿՑՈՐԸ ՑԱՔԱՆՈՒՄ Ե

Վարից հետո պետք է ցաքանել՝ հողը պատ-
 րասաւել ցանելու համար: Հողը ցաքանելու
 համար մեզ մոտ տարածված են յերկու, կամ
 յերեք ողակային զիգ-զագ և 8, 10, 12 ափսե-
 յավոր փոցխերի (ցաքաններ), վորոնք աշխա-
 տեցվում են ձիերով:

Տրակտորային ցաքանները (փոցխերը) ավե-
 լի լայն են ու ծանր և մեծ արտադրողականու-
 թյուն ունեն: 8 կամ 10 ափսեյավոր փոցխով
 (ցաքով) ձեռնառ չե տրակտորը աշխատեցնել,
 վորովհետև տրակտորի ուժը լրիվ չի ոգտագործ-
 վում և փոցխելը թանգ և նստում:

Մեծ ուժանոց տրակտորներին սովորաբար

կցում են 24—32 ափսելավոր փողխեր (ցաքաններ): Այդպիսիք չլինելու դեպքում հնարավոր ե տրակտորի յետեից հարմարեցնել մի քանի 8 կամ 10 ափսեյավոր (ձիու) փողխեր:

Քանի վոր փողխերի կամ ցաքանների քանակը կախում ունի տրակտորի ուժից և հողամասի հարմարություններից (լայն տարածություն, հարթ և այլն) պարզ ե, վոր տրակտորի փողխելու (ցաքաննելու) արատղողականությունը կարող ե տարբերվի 10—12 հեկտարից մինչև 40.—50 հեկտար, ճիշտ այնպես, ինչպես տրակտորները ըստ ուժի լինում են 10—20-ից մինչև 60—100 ուժանոց:

Մշակված հողեր վարելիս յերբեմն ուղղակի գութանի յետեից (աջ կողմից) մեկ ողակալին զիգ-զագ ցաքան են կցում, այդպիսով վարը ու ցաքանումը մի գործողությամբ կատարում Այդ հնարավոր ե, վորովհետև տրակտորը ունի այնքան պահեստի ուժ, վոր հարկավոր ե հմտորեն նրան հարյուր տոկոսով ոգտագործել: Յեթե տնտեսությունը թրթուրավոր տրակտոր ունի, ձեռնտու յե (մեծ հողամաս լինելու դեպքում) ցաքանումը կատարել նրանով, վորովհետև վերջնս, ինչպես վերը տեսանք, հողը ավելի քիչ և պնդացնում:

Ցաքաններ համար միջին հաշվով ամեն մի

հեկտարին կզնա 7—8 կգ. սպիտակ նավթ մոտ 0,8 կգ. լուղ: Յեթե բոլոր ծախքերը հաշվելու լինենք, կտեսնենք, վոր մեկ հեկտար ցաքանը (փողխելը) կարժենա վոչ ավելի քան 3—3 ռ. 50 կ.:



ՏՐԵԿՑՈՐԾ ՑԵՆՈՒՄ Ե

Ցանելու համար, ինչպես հայտնի յե, գործ են ածում շարքացաններ, վորոնք լինում են ձիու և տրակտորալին: Տրակտորալին շարքացանները լինում են 18-ից մինչև 32 և ավելի շարքալին: Մեր հանրապետության մեջ հիմա տարածված են 11 և մասամբ 13 շարքալին խոփիկավոր շարքացաններ և 8, 10, 12 շարքալին ափսեյավոր շարքացաններ: Դրանք պատրաստված են հատկապես ձիու ուժով աշխատեցնելու համար: Այնպես վոր, յերբ խոսում են շարքացանի արտադրողականության մասին, պետք ե իմանալ, թե վեր շարքացանի մասին ե խոսքը: Զին տրակտորի համեմատությամբ ավելի դանդաղ ե շարժվում,

ձիու շարքացանը ավելի փոքր է, պարզ եւ ուրեմն, փոր ձիու շարքացանների արտադրողականությունը տրակտորից խիստ փոքր կլինի:

Նորմալ պայմաններում 11 կամ 12 շարքային շարքացանների համար հարկավոր կլինեն յերկու ձի: Որեկան նրանցով (10 ժամվա ընթացքում) կարելի յէ ցանել 4—6 հեկտար, մինչդեռ տրակտորով որեկան կարելի յէ ցանել 15—20 և ավելի հեկտար, սակայն մեր պայմաններում յեղած շարքացաններով և տրակտորներով ցանվում եւ մինչև 10 հեկտար: Տրակտորային շարքացանները չլինելու դեպքում կարելի յէ յերկու կամ յերեք ձիու շարքացաններ կցել տրակտորին, փորի համար պատրաստված են հատուկ կցորդման հարմարություններ և ստանալ տրակտորային շարքացանի արտադրողականություն:

Վերը բերած տեղեկությունները վերաբերում են հացահատիկային շարքացաններին: Այժմս ծանոթանանք այլ շարքացանների հետ ինչպիսիք են բամբակի, յեգիպտացորենի, ճակնդեղ շարքացանները: Մեզ մոտ մինչև հիմա բամբակը ցանում են մի շարքային «Եվերի» կամ «Ռեկորդ» շարքացանով: 1930 թվի գարնան առաջին անգամ յերկու շարքային բամբակի շարքացան գործածության մեջ դրվեց: Բոլորին համար պարզ ե, փոր բամբակի ցանքով պետք եւ կատարվի կարճ

ժամանակվա ընթացքում: Այդ տեսակետից մեկ շարքային, կամ նույնիսկ յերկու շարքային շարքացանների արտադրողականությունը բավարար չեւ: Հարկավոր են տրակտորային շարքացանները: Մեկ շարքային բամբակի շարքացանը հատուկ եւ մանը գյուղացիական տնտեսության: Կոլեկտիվացած խոշոր տնտեսությունների համար անհրաժեշտ եւ գործածել բազմաշարքային բամբակի շարքացաններ:

Մեկ շարքային շարքացանը, թեև շաղացանի հանդեպ ունի խոշոր առավելություններ, սակայն մյուս կողմից նա մեծ թերություններ ունի: ամենից առաջ արտադրողականությունը ցածը ե, հետո նա ծուռումուռ շարքեր եանում, փորը անշուշտ գժվարացնում եւ կուլտիվացիան: Այդպես չի կատարվում յերբ բազմաշարքային բամբակի կամ յեգիպտացորենի շարքացաններ ենք գործածում, փորոնց առավելությունը հենց նրանումն ե, փոր մի կողմից ցանքու շուտ ե կատարվում և մյուս կողմից շարքերը: Ֆիահավասար հեռավորության վրա լինելով հնարավորություն են ստեղծում հետագա կուլտիվացիան մեքենայով կատարելու:

Ներկայումս գյուղատյուն ունեն հատուկ տրակտորներ, փորոնք պատրաստված են միջարքային կուլտուրաների մշակման համար (ցա-

նելու, քաղհանելու և ալին): Արդպիսիներից կարելի յե հիշել «Թարմովլ» տրակտորը, վորին կըցքում ե չորս շարքային բամբակի կամ յեզիպտացորենի շարքացան և վորը որեկան ցանում է մինչև 12 հեկտար բամբակ, ուրիշ խոսքով մի տրակտորով որեկան ցանվում ե այնքան, վորքան մի ձիով 12 որում:

Շարեւ կարծում են, վոր տրակտորը պընդացնում ե հողը, Մենք արդեն ասացինք, վորդա այնքան ել ճիշտ չի: Այդ «Թարմովլ» տրակտորը ցանելու ժամանակ աշխատում ե հատուկ պատրաստված անիվներով, վորոնք հողը չեն պնդացնում: Մյուս յերկրների փորձը ցուց ե տալիս, վոր վոչ մի ճիմք չկա վախենալու, թե տրակտորը կփչացնի հողը: Իսկ մյուս կողմից վորքան շահում ե խոշոր անտեսությունը, յերբ բամբակը տրակտորային շարքացանով ե ցանվում:

Ցեթե համեմատելիս լինենք մեր շարքացանով ցանելու ծախքը տրակտորային չորս շարքային շարքացաների հետ, կտեսնենք, վոր տրակտորով ցանելու դեպքում մի հեկտար ցանքով կնստի վոչ ավել քան 1 ռ. 50 կ.—2 ռ., այնինչ ձիով ցանելու դեպքում մի հեկտարը կնստի վոչ պակաս 5—6 ռուբլի:




ՏԲԱԿՑՈՐԸ ՀՆՁՈՒՄ Ե

Ում հայտնի չե, վոր մեր գյուղացին նահապետական միջոցներով ե կատարում իր հունձը: Դեռ մինչև այսօր նա զորենը հնձում ե ձեռքի փոքրիկ մանգաղով, կամ մարանզիով, իսկ խոտը գերանդիսվ: Որեկան հարկավոր ե 10—15 մարդ, վորպեսզի մեջքները կռած կիզիչ արկի տակ լուսաբացից մինչև իրիկնամուտ մեկ հեկտար ցորեն քաղեն: Տրակտորը ազատում ե մարդուն այդ ծանր աշխատանքից: 15 մարդու փոխարեն հարկավոր են միայն յերկու մարդ աշխատեցնելու համար տրակտորը և խուրձ կապիչը, վորով որեկան կարելի յե հնձել 7—10 և ավելի հեկտար, այդպիսով մեկ որում կատարել այնքան աշխատանք, վորքան 70—80 մարդ կարող են կատարել:

Խ. Միության գործարանները սկսել են ամենաուժեղ թափով պատրաստել խոշոր հնձող մե-

քենաներ արակառուվ աշխատելու համար: Իհար-
կե, խոսք չի կարող լինել, վոր որեկան 7—10
հեկտար հնձող մեքենան ձեռնուու լինի անհա-
տական տնտեսության մեջ նրան աշխատեցնելու
համար: Անպատճառ պետք ե լինի խոշոր հողա-
մաս, վորպեսզի մեքենան աշխատի լրիվ բեռ-
նվածությամբ: Բացի հնձող մեքենայից, վորը
լինում ե մի քանի տեսակի, տրակտորը աշխա-
տեցնում ե նաև կոմբայնը, դա մի հսկա գյու-
ղատնտեսական մեքենա յե, վորը, կարճ ասած,
հնձող և կաշող մեքենայի աշխատանքը միաժա-
մանակ ե կատարում, այսինքն հենց արտի մեջ
մի կողմից հնձում ե և մյուս կողմից հնձածը
գնացած տեղում ծեծում և մաքուր ցորեն դուրս
բերում:

Որեկան մի տրակտորով այդպիսի մեքենան
կհավաքի 12—20 հեկտար: Վոչ մի կասկած, վոր



վոչ թե անհատական տնտեսությունները, այլ
նույնիսկ փոքր կոլխոզները չեն կարող այդպիսի

բարդ մեքենայի համար բեռնվածություն ստեղծել:
Խ. Միության մեջ արդեն սկսել են այդ
կոմբայներից (հնձող կալոող մեքենաներ) պատ-
րաստել:

Տրակտորը գործածվում ե նաև խոտհարք+
ները հավաքելու համար: Հայաստանում յեղած
խոտհար մեքենաները ձիերով են աշխատում: Այս
տարուց սկսած ներմուծվում են հատուկ խոտհար
մեքենաներ, վորոնք հարմարեցված են «Փորդ-
գոն» կամ «Ֆարմոլլ» տրակտորով աշխատելու:

Տրակտորային խոտհար մեքենաի լայնու-
թյունը 2,4 մետրից մինչև 3 մետր ե: Որեկան
ալդպիսի մեքենայով կարելի յե քաղել մինչև 15
հեկտար: Այսաեղից պարզ ե, վոր յեթե մի ձիու
խոտհար մեքենան փոխարինում ե 12 գերան-
դիավորի, ապա 1 արակտորային խոտհար մեքե-
նան կփոխարինի 25—30 և ավելի գերանդիա-
վորի: Ֆորդգոնով աշխատող խոտհար՝ մեքենան
«Դիտրոիտ» մարկարի մեքենա յե:

ՏՐԵԿՑՈՐԸ ԿԸՆՍՈՒՄ Ե

Գյուղացին մանգաղով քաղելուց հետո, իր
ցորենը ծեծում ե կամերով, կամ ջառջարով,
փոքրիկ կալերի վրա: Որեկան յերկու, յերեք կա-
մով ծեծում ե 200—300 խուրձ և հետո հավա-

քում — զեզ անում, վոր քամուն տա, կամ քամ-
հարով զտի Դա ամենալետամսաց ձեն ե բեր-
քահավաքման աշխատանքներում։ Մեզ բոլորիս
լավ հայտնի յե, թե ինչպես ամբողջ որը գյու-
ղացին իր ընտանիքով պարապում ե յերկու յե-
րեք բեռ (20—30 փութ) ցորեն, կամ գարի մաք-
րելու համար։

Ալդպիսով ժամանակը իզուր վատնում ե
աշխատանքի ամենավատթար պայմաններում և
ստացած արդյունքն ել քիչ։

Փոքրիկ կալը մեկից յերկու ամիս զբաղեցնում
ե նրան։ Ալդպես աշխատելուց բան դուրսչի գա։

Կալսելու աշխատանքը արագացնելու և գյու-
ղացու բեռը դյուրացնելու համար պետք ե կոլ-




լեկտիվ կերպով տրակտորի հետ միասին կալսող
մեքենա ձեռք բերել։

Տրակտորը աշխատեցնում ե կալսող մեքե-
նան, վորը որեկան 600-ից—1000 փութ ցորեն
կմաքրի, կզտի և տոպրակները կլցնի։ Տրակտո-

րով աշխատող կալսող մեքենան կարող ե առանց
դադարի յերկու յերեք հերթ աշխատել։ Այդ գեղ-
քում մեքենայի արտադրությունը կրկնակի և
յեռակի կդառնա։ Դա ցույց ե տալիս, վոր մի
կալսող մեքենա սեղոնում կարող ե 400-ից—
600 հեկտար ցորեն կամ գարի մաքրել։ Դրա հա-
մար կպահանջվի 1 տրակտոր, 1 փորձված տրակ-
տորիստ, որեկան 10—15 մարդ՝ խրձերը մեքե-
նայի բերանը տալու, դարմանը հավաքելու, ցո-
րենը տանելու և այլն։ Ուրեմն, յեթե մի գյուղ,
ասենք 250 տնից բաղկացած, ունի 600 հեկտար
ցանքս, այդ գյուղի համար կպահանջվի ընդամե-
նը 1 կալսող մեքենա և մեկ տրակտոր՝ փոխա-
րինելու համար 300—400 կամ 600—800 լըծ-
կաներով։

Կալսող մեքենայի մի փութ ցորեն մաքրելը
կստի 4-ից—10 կոպեկ, իսկ կամերով — ամենա-
քիչ 60—70 կոպ։ Հայաստանում մենք այժմ շատ
քիչ կալսիչներ ունենք — ընդամենը 20—25 հատ։
1931 թվի համար նախատեսված ե մինչև 100
հատ։

ՏՐԵԿՑԱՐԸ ԿՌՏԵՐՋԻՄ Է ՅԵՎ ԱՅԼ ԱՅԽԵՑՄՆՔ
Բոլոր տրակտորները իրենց կոզքին ունեն
փոկագնաց անիվ (շկիվ), վորի միջոցով աշխա-
տեցնում են այլ մեքենաներ։




Ինչպիսի այլ աշխատանք տրակտորը կառող ե կատարել:

Տրակտորով կարելի յե խոտ մամլել, մոռառաղաց աշխատեցնել, կովերի համար սիլոսի կեր պատրաստել:

Եինարարության ասպարիզում տրակտորը ոգտագործվում ե քար ջարդելու, բետոն խառնելու, ծանրություններ տեղափոխելու, սղոցարան աշխատեցնելու, ելեքտրական լույս տալու և մի շարք այլ աշխատանքներ կատարելու համար:

Մեր մշակութներից բամբակը ավելի շատ ձեռքի աշխատանք ե պահանջում: Կա հատուկ



տրակտոր, վորը կարող ե բամբակը կուլտիվացիալի յենթարկել: Այդպիսին ե «Ֆարմոլ» տիպի տրակտորը, վորը ունի յերեք անիվային հարմարություն, հետեւ անիմսերը ընդգրկում են բամբակի յերկու շարքերը, իսկ առջևի անիվը գնում ե այդ յերկու շարքերի միջով: Այդ տրակտորի շրջանակը այնպես բարձր ե կառուցված, վոր բամբակի կամ յեգիպտացորենի շարքերի միջով շարժվելիս չի փչացնում բույսը, իսկ հետեւ կամ առջևից կցված կուլտիվատորը միանգամից կարող ե մինչև չորս շարք քաղանել: Այդ նույն տրակտորով բամբակը կարելի յե ծծումբով սրակել: Դրա համար հարկավոր ե միայն հարմարեցնել «Նիագարա» սիստեմի 6 շարքա-

լին ծծումբ սրակող մեքենան տրակտորի վրա:

Այնուհետև տրակտորը գործածում են անտառից փայտեղեն փոխադրելու համար: Թրթուրափը տրակտորները ավելի նպատակահարմար են գործածելու այդ աշխատանքների համար, քանի վոր վերջիններս իրենց կառուցվածքով ավելի հարմարեցված են դաշտի անհարթ ռելիֆին, քան անիվագորները. Թրթուրափը տրակտորներից կարելի յե հիշել «Կլեվելանդ» տրակտորները կամ, կամ ասած, «Կլետրակ» և «Կատերկիլար», տիպի տրակտորներ:

Այդ տիպի տրակտորները լայն գործածություն կգտնեն նաև ճանապարհների շինարարության մեջ: Զաեռ ժամանակ նրանցով կարելի յե ճանապարհների ձյունը մաքրել և արդպիսով լնդհատված յերթեեկությունը վերականգնել:


ԻՆՉՊԵՍ Ե ԸՆԽԵՑՈՒՄ ՑՐԱԿՑՈԲԸ

Այժմ մի քանի խոսք տրակտորում ուժ արտադրելու մասին:

Տրակտորը կարելի յե բաժանել յերկու մասի. 1) տրակտորագին շարժիչ, վորի մեջ պատրաստվում ե ուժը և 2) փոխանցման մեխանիզմներ ու մասեր, վորոնք անհրաժեշտ են աշխատանք կատարելու համար: Շարժիչում պատրաստված ուժը մի շաբաթ գործադրությունը կատարելու համար:

անիվների միջոցով փոխանցվում ե յետեի անիվներին, վորոնք ուժ ստանալով ամբողջ մեքենան բոթում են առաջ, իսկ առջեի անիվները ծառայում են միայն ուղղություն պահպանելու համար:

Այժմ տեսնենք ուժը ինչպես ե ստացվում շարժիչի մեջ:



Տրակտորային շարժիչները ունենում են մեծ մասամբ չորս գլաններ, վորոնց մեջ աշխատում են մխոցները: Մխոցները միացված են ծնկաձև առանցքին, վորը պտտվելիս մխոցները վերև ուներք ե տանում-բերում: Ծնկաձև առանցքը աշխատելու շինված, վոր պտտվելիս առաջին և չորրորդ մխոցները միաժամանակ են բարձրանում ու իջնում, յերկրորդ ու յերրորդ միաժամանակ:

ՅԵՆԹԱՂԵՆՔ մի ըոպե, վոր շարժիչը մի գլանալին եւ Ռւժը այդ գլանում ստացվում եւ հետևյալ կերպ. մխոցը յերբ ներքեւ եւ իջնում, նա ներածում եւ պայթուցիկ խառնուրդ գլանի մեջ. Այդ խառնուրդը բաղկացած եւ լինում գոլորշիւրցած սպիտակ նավթից և ողից այնպիսի հարաբերությամբ (14 ից—17 մաս ոդ, մեկ մաս հեղուկ վառելիք), վոր հեշտությամբ պայթում եւ

Պայթուցիկ խառնուրդը ներաճման խփանի միջոցով ներս առնվելուց հետո մխոցը վերև և գնում և սղմում եւ այդ խառնուրդը վորքան վոր կարող եւ Յեթե մխոցի առաջին գործողությունը մենք կոչում ենք ներածում այդ յերկրորդ գործողությունը կլինի սեղմում. Սեղմումի գործողության վերջին, յերբ խառնուրդը գտնվում եւ ուժեղ ճնշման տակ, գլանի մեջ, մխոցի գլխին ելեկտրական կայծ եւ առաջանում, վորը և պայթեցնում եւ խառնուրդը. Պայթումից առաջացած ուժի շնորհիվ մխոցը, թափով ներքեւ գնում և իր հերթին պտտեցնում եւ ծնկածեւ առանցքը. Շարժիչի մխոցների աշխատանքը այնպես եւ դասավորվում, վոր չորս գլանային շարժիչում մի ըոպեյում ստացվում եւ մոտ 2.000 պայթում - ծնկածեւ առանցքը այդ գեպքում կատալում եւ 1.000 պառյութ չասկանալի յե վոր շարժիչի մեջ մի ըոպեյում 2.000 պայթում առաջանալով հսկական ուժ եւ ստաց-

վելում. վորը եւ ծնկածեւ առանցքը ու նրա ծարքին հապցրած թափանիվի միջոցով վորքանցվում եւ մի շարք ատամնավոր անիվների ու այնաեղից ել տրակտորի յետեւի օնիվներին:

Պայթման գործողությունից հետո մխոցը վերև և բարձրանում և զուրս վանում ալրված վազը. Այսպիսով շարժիչի տմեն մի զլանում չորս գործողություն եւ տեղի ունենում - ներածում, սեղմում, սղմում, արտածում - և այդ գործողությունները իրար հաջորդում են այնպես արագ և համաշափ կերպով, վոր մենք լսում ենք միան շարժիչի անընդհատ միալար ձայնը:

ՏԲԿՑԱՐՔ ՊԵՏք Ե ԼԱՎ. ԽՆԱՄԵԼ

Տրակտորի կյանքը յերկարացնելու համար հարկավոր եւ նրան լավ խնամելու Վորքան վոր անփութ և անուշադիր վերաբերմունք ցուց տանք հանդեպ մեքենան, այնքան նա շուտ կմաշվի և գործածությունից դուրս կնկնի:

Տրակտորը պետք եւ լուղելու Յերեք տեսակ յուղ եւ հարկավոր: Շարժիչի համար գործածվում են «Ավտալ» լուղեր («Լ» - ծմեռ ժամանակ, «Մ» - գուրուն և աշուն ժամանակ, «Տ» - ամառվա շոգ ժամանակ):

Փոխանչման մեխանիզմների (արագության արկղ, դիֆֆերենցիալ) համար գործածվում ե

ավելի թանձր յուղ, վորը կոչվում ե վիսկոզին (№ 3—ձմեռ, գարուն, աշուն, № 5—ամառ ժամանակ): Առջևի և հետեւի անիմսերի համար գործածվում ե թանձր տավոտ յուղ: Վորպեսզի արակտորը յերկար աշխատի և քիչ յենթակա լինի նորդուման, անհրաժեշտ ե ճշգրիտ կերպով հետևել այս յուղացուցակին, վորը կազմված է արակտորների համար:

Զուրը պետք ե միշտ լիքը պահել ուղիառում, վորպեսզի մեջենան չափից ավելի չտաքանա և ուժից չընկնի: Իհարկե ավելի լավ ե անձրեի ջաւը գործածել, վորովհետեւ վերջինս չի պարունակում իր մեջ կրային մասեր, վորոնք չըի յեռացման և հովացման պրոցեսում կաջում են զլանների պատերին, կազմում են հաստ շերտ և խանդարում են զլանների նորմալ հովացման:

Զուրա ժամանակ շատ զգույշ պետք ե լինել, ջուրը չթողնել ուղիառում, վորովհետեւ կարող ե սառչել, իսկ ջուրը սառչելուց լայնանում ե, կտա շարժիչը կպատոի: Այդպիսի դեպքեր պատահում են մեզ մոտ:

Պետք ե զգույշ լինել, կոշտ ճանապարհով գնայիս արակտորը արագ չը քշել վորովհետեւ մեծ ցնցում ե պատճառում արակտորին: Աշխատել արակտորը միշտ մաքուր պահել կեղտից, յուղից, վորուց:

Յեթե ինչ-վոր պատճառներից արակտորի մեջ ծեծք ե առաջանում — չպետք ե շարունակել քշել, առանց մեխանիկից կամ բրեգադիրից թուլավություն ստանալու:

ՄԵԽՆԱ-ՑՐԿՎՅՈՒԹԾՆ ԿԸՑԵՆՆԵՐ ԵԵՎ ԶԱԿՈՑՆԵՐ

Տրակտորների տեխնիկական և տնտեսական եֆֆեկտը ավելի ցայտուն կերպով հարութերվում է, յերբ նրանք խնամվում և ոգտագործվում են մեքենա արակտորային կայանի կամ ջոկատի կողմից: Այժմ մեզ մոտ արակտորները կենտրոնացվում են, և ընդհանուր ղեկավարությունը անցնում է արակտոր-կենտրոնին, վորը ունի համապատասխան տեխնիկական շտատ — հետևելու մեջնաների լրիվ բեռնվածության, ուցիոնալ ոգտագործման և լավ խնամելուն:

Հստ ծրագրի հայտանում պետք ե կազմակերպվեն 6 մեջենա — արակտորալին կայաներ — Սարդարաբազում, վորը արդեն կա, Ռւլուխաններվում, վորտեղ նույնպես արդեն կազմակերպվում, ե կենինականում, Բասարգեչարում, Դավալվում և Լոռում:

Մեջենա-արակտորային կայանները դառնալու յեն այս եներգետիկ բազաները, վորոնք պետք ե վերակառուցեն դյուզատնտեսությունը ոոցիալիստական ուղիներով:


Փաքը, թղուկային կոլխոզների համար Թբիլիսի տորակին ջոկատներ ունենալը ձեռնտու չի, իսկ մեկական տրակտորներ ցրել կոլխոզներում կը դժվարացնի աեխնիկական սպասարկումը, մի շարք դժվարություններ ստեղծելով պահեստային մասերով, կամ արենատանոցով ապահովելու գործում։ Դրանից պարագաների որերը կավելան, և վարի ինքնարժեքը բարձր կլինի։

Մեքենա-տրակտորային կայանները և ջոկատները այդ տեսակետից մեծ ազդակ են դաստիալու յեղած կոլխոզները խոշորացնելու։ Խոշոր կոլխոզում տրակտորը ստիլված չի լինի մի փոքրիկ հողամաս վարելուց հետո փոխադրվի մի այլ հողամաս վարելու։ Այս ժամանակ $1-1\frac{1}{2}$ հեկտարի փոխարեն կվարվի $2-2\frac{1}{2}$ հեկտար։ Մեքենա-տրակտորային կայաններում տրակտորի աշխատանքը կարելի յէ դարձնել յերկներթ, որեկան աշխատանքի քսան ժամ, այնինչ առանձին կոլխոզներում դա այնքան ել դյուրին չե։

Զանազան աշխատանքների համար պահանջվում են տարրեր տեսակի և տիպ տրակտորներ։ Խոչ խոսք, վոր փոքր կոլխոզի համար անհնար կլինի ունենալ մի քանի տեսակ տրակտորներ գանազան աշխատանքներ կատարելու

համար իսկ մեքենա-տրակտորային կալանը կարող ե ունենալ և մեծ տրակտորներ՝ վարելու համար, թեթև տրակտորներ՝ ցանելու համար և համար արակտորներ՝ միջամբարին կուտիվացիս կատարելու համար։





6 7-

ЧИСЛ 10 (1 $\frac{1}{2}$ и).




А. КАЗАРЯН

ТРАКТОР И ЕГО РАБОТА

Госиздат ССР Армении
Эривань — 1931

ՀՀ Ազգային գրադարան



NL0280342

16171